

Աշոտ Բադալյան
ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ
ashotbadalyan01@mail.ru

**«ՆԱՊԱՍՏԱԿԸ» ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ. ՏԱԲՈՒ, ՀՆԱԲԱ-
ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ժամանակակից պարսկերենում կան որոշ կենդանանուններ (անգլ. *zoonyms*), որոնք, լինելով բառային նորաբանություններ (անգլ. *lexical innovations*) հիմնականում նոր, մասամբ նաև միջին պարսկերենում, ըստ կազմության նկարագրական ձևեր են և բավական հեշտ են ստուգաբանվում: Սա ինքնին չի կարող նշանակել, որ միջին և հին իրանական լեզվադարաշրջանում ինչպես պարսկերենում, այնպես էլ մնացած իրանական լեզուներում չեն եղել համապատասխան հնավանդ ձևեր դրանց համար, կամ այլ կերպ ասած՝ նշվածից չի կարող բխել, որ իրանցիները չեն ճանաչել այդ կենդանիներին մինչև իրանախոս տարածքների իսլամականացումը:

Այս հոդվածի նպատակն է ներկայացնել վերևում նշվածի մի օրինակ՝ համապատասխան կենդանանվան իրանական նկարագրական ձևերի կողքին բերելով այն անվանումները, որոնք տարածված և կիրառական են եղել հին իրանցիների խոսքում մինչև Մասանյան ժամանակաշրջանի ավարտը և Իրանական սարահարթի իսլամականացումը:

Միաժամանակ հոդվածում փորձ է արվում փնտրելու պատասխանն այն հարցի, թե արդյո՞ք «նապաստակ» բառի համար հնում գործածական բնիկ ձևի կորուստը արևմտաիրանական լեզուներում և, սրան զուգահեռ, դրա պահպանումը որոշ արևելաիրանական լեզուներում, հետևանք է բառարգելման կամ տաբուավորման ինչ-ինչ պատմական գործընթացների իրանական լեզուների տարածման պատմական արեալի մի մասում և նույնի բացակայության՝ մյուս հատվածներում:

Անդրադարձ է արվել նաև գուտ *արտալեզվական* այն իրողություններին, որոնք կարող էին նախ տարուավորել, ապա և պայմանավորել հիմնական բառաֆոնդի այդ նախնական հնավանդ ձևի կորուստը՝ ավելի ուշ արդեն առաջ բերելով նաև նոր նկարագրական անուններ:

Այս հոդվածում համաժամանակյա և տարժամանակյա քննության են ենթարկվել *նապաստակ* բառի համար վկայված հին և արդի ձևերը պարսից լեզվի պատմության տարբեր փուլերում, ինչպես նաև իրանական այլ լեզուներում և բարբառներում՝ ելնելով այն փաստական իրողությունից, որ պատմահամեմատական լեզվաբանության համար վերջիններով ավանդված և առկա նյութը ունի կարևոր նշանակություն ոչ միայն հնավանդ ձևերի հայտնաբերման, հաճախ վերականգնման, այլ նաև կոնկրետ այս դեպքում տարուավորման պատճառների պատմական խորքը հասկանալու համար:

«Նապաստակ» կենդանանվան համար դեռևս միջին պարսկերենում վկայված է *xar-gōš* ձևը³⁶⁷, որը *xar-gōš* // *xar-gūš* տեսքով շարունակել է մնալ գործածական նոր և՛ ժամանակակից պարսկերենում³⁶⁸: Նկարագրական այս ձևը, որը ստուգավանվում է որպես բառացի «մեծ ականջ [ունեցող]» (*xar* (<**xara-*) «մեծ»³⁶⁹ և *gūš* (<**gauša-*) «ականջ»), հիմնական նշանակիչն է «նապաստակ» կենդանանվան ոչ միայն ժամանակակից պարսկերենում այլ նաև նոր իրանական լեզուներում և բարբառներում, ինչպես օր.՝ արբ. *xargūš*, աֆթ. *xargu:š*, անրկ. *xerģiš(t)*, արդս. *xegōš*, բել. *kargoš(k)* //

³⁶⁷ Mackenzie D.N., A concise Pahlavi dictionary, London, 1986, p. 94.

³⁶⁸ Steingass F.A., Comprehensive Persian-English Dictionary, 5th ed. London, 1963 (1st ed. London, 1892), p. 456.

³⁶⁹ Բառի հիմնական և առաջնային իմաստն է «էշ»: Իմաստի լայնացման արդյունքում որոշ բարդ բառերում այն սկսել է հանդես գալ նաև «մեծ, խոշոր» նշանակությամբ: Այդպիսի օրինակներ են ժամանակակից պարսկերենում *xarxi[y]ār* «մեծ վարուկ», *xarčang* «խեցգետին» (բառ. «մեծ ճանկ»), *xarkūf* «մեծ բու», *xarkār* «աշխատասեր, մեծ ծավալի աշխատանք անող», *xargāh* «մեծ վրան», *xarmagas* «պիծակ, բոռեխ» (բառ. «մեծ ճանձ»), *xarmūš* «առնետ» (բառ. «մեծ մուկ»), *xarnā(y)* «եղջերափող» (բառ. «մեծ փող»), *xarpūl* «հարուստ, մեծահարուստ, շատ փող ունեցող» և այլն:

xargōšk, բիաբն. *xargü:š*, բշգր. *xārgūš*, էբր. *xaruš*, բջլն. *hārōšā*, քնդ. *haurišā*, հվրմ. *hawreša*, գվրջ. *hārūšā*, հրզն. *haröüš*, քրդ. *karwešk*/*kawrešk*, լար. *xargoš*, միմ. *xārviš*, նախն. *xergoš*, սզգ. *xaruš*, թար. *hargōš*, վֆս. *xirivš*, վրզն. *xergiš*, գազ. *argūš* // *ārweš* // *hargūš* և այլն³⁷⁰:

«Նապաստակ» կենդանանվան նկարագրական մի ձև է նաև նոր պարսկերենում հանդիպող *deraz-gūš* (*deraz* «երկար», *gūš* «ականջ») բառը³⁷¹, որը թարգմանաբար նշանակում է «երկարականջ» և որի հետ կազմության տիպաբանության ու իմաստի տեսանկյունից համեմատելի են օտերենում կիրառական *tærqūs* և *tærqos* (< *darğ-qūs* «երկարականջ»³⁷² < **darga-gauša*³⁷³) բառերը: Ե՛ւ օտերեն *darğ-qūs* տարբերակի, և՛ պարսկերեն *xargūš* նկարագրական անվանումների առաջացումը Վ. Աբանը հնարավոր է համարել՝ տաբուական մոտիվներով պայմանավորված:³⁷⁴

Ստուգաբանորեն մեկ այլ հետաքրքիր նկարագրական ձև է նաև արևելաիրանական լեզուների պամիրյան խմբում հանդիպող տարբերակների համար վերականգնված **xšīta-duma-* (բառ. «կտրած պոչ») հին իրանական բառաձևը (հմմտ. շգն., բջվ., բրթ. *xšītum*, ոշն., ոշրվ. *xšūtum*, սրբլ. *xš(i)tim* // *xš(i)tūm*)³⁷⁵, որին հանգող բոլոր ձևերը Ջ. Էդելմանը համարել է տաբու բառեր (անգլ. taboo words)³⁷⁶:

Նկարագրական մեկ այլ, բայց բավականին հնավանդ օրինակ կարող է լինել նաև իրանական լեզուների համար կողմնային գրականության (գերմ. Nebenüberlieferung) արժեք ունեցող

³⁷⁰ **Hasandust M.**, A Comparative-Thematic Dictionary of the New Iranian Languages and Dialects, vol. 1, Tehran, 2011. (In Persian).

³⁷¹ **Steingass F.A.**, նշվ. աշխ., էջ 507:

³⁷² **Абаев В.**, Историко-этимологический словарь осетинского языка, том III, Ленинград, 1979, стр. 271.

³⁷³ **Hasandust M.**, նշվ. աշխ., էջ 228:

³⁷⁴ **Абаев В.**, նշվ. աշխ., էջ 271:

³⁷⁵ **Edelman Dž.**, “Some taboo-words in Iranian languages of Central Asia”, in: Brigitte L.M. Bauer & Georges-Jean Pinault (eds.), Language in Time and Space. A Festschrift for Werner Winter on the Occasion of his 80th Birthday, De Gruyter Mouton, 2003, p. 123.

³⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

գրաբարում վկայված «նապաստակ» բառը, որն ըստ Ա. Փերիխանյանի՝ հանգում է պրթ. **ni-pasta-ka-* բոց. *թաքնվող*, իմաստի լայնացմամբ՝ *վախկոտ* նշանակությամբ³⁷⁷:

Ի տարբերություն վերևում թվարկված բոլոր տարբերակների, որոնք նկարագրական ձևեր են և ամենայն հավանականությամբ հետևանք պատմական ինչ-որ ժամանակաշրջանում իրանական ժողովուրդների մոտ «նապաստակ» կենդանանվան բնիկ ձևի տաբուավորման և լեզվից դուրսմղման, իրանական որոշ լեզուներում «նապաստակ» բառի համար պահպանվում է հնավանդ մի տարբերակ, որը կարող է եղած լինել վաղնջաիրանական ամենահին ձևը և որը գոյություն է ունեցել նաև պարսկերենում մինչև անվան տաբուավորումը և համեմատաբար նոր *xargūš* և *derāz-guš* նկարագրական ձևերի առաջացումը: Խոսքը վերաբերում է վաղնջաիրանական կամ հին իրանական **saha-* ձևին «նապաստակ» նշանակությամբ (հմմտ. հնդիրան. **śasa-* հին հնդկերեն *śāśa-*), որն ընկած է միջին պարսկերեն *sahūy* // *sah-ōg*³⁷⁸ «նապաստակ»³⁷⁹ բառի հիմքում: Գ. Մորգենստիեռնեն ստուգաբանական կապ է տեսել արևելաիրանական լեզուներից աֆղաներենում և արևելաիրանական տարածքներում խոսվող այլ իրանական լեզուներում տարբեր հնչյունական զարգացումներով³⁸⁰ դեռևս պահպանվող հին իրանական այդ ձևի և հնիս. **kās-* «մոխրագույն» վերականգնման միջև՝ համարելով, որ առաջինը կարող է, որպես փոխանունություն, ծագած լինել հենց հնդեվրոպական գունանունից³⁸¹: Գունանուն > կենդանանուն անցման ենթադրությունը թվում է այստեղ ոչ անհավանական, հատկապես

³⁷⁷ **Périkhanian A.**, “‘Lièvre’ et ‘courrier’ en arménien et en iranien,” *Annual of Armenian Linguistics*, 3, pp. 43–46.

³⁷⁸ Միջին իրանական լեզուներից հմմտ. խոթ. *saha-*, խրզվ. *s’k* (**Morgenstierne G.**, *A New Etymological Vocabulary of Pashto*, Wiesbaden, 2003, p. 77)

³⁷⁹ **Bailey H. W.**, “Three Pahlavi Notes”, *Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland*, no. 2, 1931, pp. 424–426, **Morgenstierne G.**, նշվ. աշխ., էջ 77:

³⁸⁰ Աֆղ. *soy*, փար. *sahök*, օրմ. *sikak*, յղ. *sīy*, վիս. *sīy*, սլ. *sūy* (**Morgenstierne G.**, նշվ. աշխ., էջ 77):

³⁸¹ **Morgenstierne G.**, նշվ. աշխ., Wiesbaden, 2003, p. 77, նաև՝ **Edelman Dž.**, նշվ. աշխ., էջ 123:

որ պարսկերենում կան դրա այլ օրինակներ ևս (հմմտ., օրինակ, հայերենի՝ գրաբարյան վկայություն ունեցող *աշխէտ, երաշխ, զարտակ, ճարտուկ, ճերմակ* բառերը, որոնք իրանական լեզուներից փոխառվել են որպես ձիու գույն արտահայտող բառեր³⁸²):

Հաշվի առնելով «նապաստակ» կենդանական համար հին, միջին և արդի իրանական լեզուներում վկայված ձևերի տարածման աշխարհագրությունը, հատկապես այն, որ միջին պարսկերենում արդեն իսկ վկայված է *hlgwš /xargōš* նկարագրական ձևը և հանդիպում է ավելի հնավանդ և բնիկ հնդեվրոպական, բայց լուսանցքային կիրառություն ձեռք բերած *sahūy* // *sah-ōg* ձևին գուգահեռ, իսկ վերջինիս հետքը պահպանվել է միայն Մասանյան իշխանության պերիֆերալ (ծայրամասային) գոտիներում՝ Պամիրի և Հինդուկուշի լեռնային շրջաններում, կարելի է ենթադրել, որ «նապաստակի» համար բնիկ ձևի տաբուավորումը տեղի է ունեցել այսպես կոչված պետական–պաշտոնական, հստակ նորմավորված զրադաշտականության մեջ: Տաբուավորումը շրջանցել է թերևս այն հատվածները, որոնք աշխարհագրական դժվարիասանելի դիրքով պայմանավորված, զերծ են մնացել հատկապես Մասանյան շրջանում խիստ նորմավորված պետական զրադաշտականության թելադրած կանոններից և շարունակել են դավանել այսպես կոչված «ժողովրդական» զրադաշտականություն:

Այս աշխատանքում բերված է միայն կենդանական տաբուավորման մի օրինակ միայն, սակայն իրանական լեզուներում և պարսկերենում կարելի է գտնել այլ դեպքեր ևս (նկարագրական ձև՝ որպես նորաբանություն//բնիկ հնավանդ ձև՝ որպես արխայիզմ), ինչպես օր. *lāk-pošt* // *kašaf* «կրիա», *xār-pošt* // *žūža* «ոգնի»³⁸³ ևն:

³⁸² **Հովհաննիսյան Լ.**, *Հայերենի իրանական փոխառությունները*, Երևան, 1990, էջ 109:

³⁸³ Կովկասյան պարսկերենում «ոգնի» բառի մասին տե՛ս **Tonoyan A.**, “Das Problem des Phonems ž in den nord-tatischen Dialekten von Berg-Schirwan”, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, band 104, Wien, 2014, pp. 193-198, նաև **նույնի**՝ “Some remarks on the origin of the Iranian stratum of Caucasian Persian (Tati) Lexicon”, Bulletin of the Institute of Oriental Studies, vol. 1/1(34), Yerevan, 2021, pp. 167-178, DOI: 10.52837/27382702-2021-34. 1-167:

Հապավումների ցանկ

արգ. Արուզեյդաբադի բարբառ
անրկ. Անարակի բարբառ
արդս. Արդեսթանի բարբառ
աֆթ. Աֆթարի բարբառ
աֆդ. աֆդաներեն
բել. բելուջերեն
բիաբն. Բիաբանաքի բարբառ
բշգր. Բաշագերդի բարբառ
բջլն. Բաջալանի խոսվածք (գորանի)
բջվ. բաջուվի
բրթ. բարթանգի
գվրջ. Գավրաջուի խոսվածք (գորանի)
գազ. գազայերեն
էբր. Էբրահիմաբադի բարբառ
թար. Թարի բարբոռ
լար. լարերեն
խոթ. խոթանասակերեն
խրզմ. խորեզմերեն
հնխ. հնդեվրոպական նախալեզու
հվրմ. Հավրամանի խոսվածք (գորանի)
հրզն. հարզանի
միմ. Միմեի բարբառ
յդդ. յիդդա
նաին. Նայինի բարբառ
շգն. շուգնանի
ռշն. ռուշանի
ռշրվ. ռոշորվի
սզգ. Սազգաբադի բարբառ
սզլ. սանզլեչի
սրքլ. սարիքուլի
վխ. վախի
վրզն. Վարզանեի բարբառ

վֆս. Վաֆսի բարբառ
փար. փարաչի
քնդ. Քանդալուի խոսվածք (գորանի)
քրդ. քրդերեն
օրմ. Օրմուրի

Ashot Badalyan
YSU Department of Iranian Studies
ashotbadalyan01@mail.ru

“RABBIT” IN IRANIAN LANGUAGES. TABOO, ARCHAISM AND NEOLOGISM

The presented article discusses the attested forms of the word “hare” in old, middle and new Iranian languages. It has been shown that, except for some Eastern Iranian languages, the attested and still used forms are lexical innovations, which are a result of the tabooisation of inherited archaic form. An attempt is made to show the inherited Iranian form of Indo-European origin, which was used for the zoonym “hare” before its tabooisation and reduction of the use of geography.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հովհաննիսյան Լ.**, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990:
2. **Абаев В.**, Историко-этимологический словарь осетинского языка, том III, Ленинград, 1979.
3. **Bailey H. W.**, “Three Pahlavi Notes”, Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, no. 2, 1931, pp. 424–426.
4. **Edelman Dž.**, “Some taboo-words in Iranian languages of Central Asia”, in: Brigitte L.M. Bauer & Georges-Jean Pinault (eds.), Language in Time and Space. A Festschrift for Werner Winter on the Occasion of his 80th Birthday, De Gruyter Mouton, 2003, p. 123.
5. **Hasandust M.**, A Comparative-Thematic Dictionary of the New Iranian Languages and Dialects, vol. 1, Tehran, 2011. (In Persian).
6. **Mackenzie D.N.**, A concise Pahlavi dictionary, London, 1986.

7. **Morgenstierne G.**, A New Etymological Vocabulary of Pashto, Wiesbaden, 2003:

8. **Périkhanian A.**, “‘Lièvre’ et ‘courrier’ en arménien et en iranien,” Annual of Armenian Linguistics, 3, pp. 43–46.

9. **Steingass F. A.**, Comprehensive Persian-English Dictionary, 5th ed. London, 1963 (1st ed. London, 1892)

10. **Tonoyan A.**, “Das Problem des Phonems ž in den nord-tatischen Dialekten von Berg-Schirwan”, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, band 104, Wien, 2014, pp. 193-198

11. **Tonoyan A.**, “Some remarks on the origin of the Iranian stratum of Caucasian Persian (Tati) Lexicon”, Bulletin of the Institute of Oriental Studies, vol. 1/1(34), Yerevan, 2021, pp. 167-178, DOI: 10.52837/27382702-2021-34.1-167.